

375  
Ե-58

Բ. Պ. ԵՍԻՂՈՎ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ  
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

864

ԽՈՐՃՐԱՅԻՆ ԴՊՌՈՑԻ ԵՐԱԳՐՆԵՐԸ

ՍԱՀՄԱՆ ՔՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1925

375 108 APR 2013

375 06 APR 2010

5-58

ԱՐ № 1. ԽՈՐՀԵՄԱՅԻՆ ԴՊԲԱՑԻ ԳՐԱԾԱՐՔ № 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄ Վ. ԱՐՄԱՆՅԱՆ

Б. П. ЕСИПОВ.

ЗАПРОСЫ КРЕСТЬЯНСТВА И  
ПРОГРАММЫ СОВЕТСКОЙ  
ШКОЛЫ.

на армянском языке.

Բ. Պ. ԵՍԻՊՈՎ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ  
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Ց 6 Կ

ԽՈՐԴԱՑԻՆ ԴՊԲԱՑԻ ԵՐԱԳՐՆԵՐԸ

1006  
26405




Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва, Никольская, 10.

ԱԽԱՇ ԺՈՂՈՎՐԴՅԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՈԽԿԱ

1925



Книга набрана и отпечатана в 3-ей  
типоверхии Госиздата С.С.Р. Армении  
Москва, Армянский пер., 2.  
В количестве 3000 экземпляров.  
Главлит № 43120.

Պետական Գիտական Խորհրդի ծրագրները,  
ինչպես և բոլոր դպրոցական ծրագրները, վորո-  
շում են դպրոցական աշխատանքի բովանդակու-  
թյունը, սակայն դրանք նախկին ծրագրներից  
տարբերվում են նրանով, վոր ընդգրկում են  
դպրոցի կյանքի և աշխատանքի բոլոր կողմերը, և  
վո՛չ թե միայն ուսուցման նյութը: Պ.Գ.Խ.-ի ծրա-  
գրները պահանջում են, վոր դպրոցը կազմակերպի  
մանկան ամբողջ կյանքը—թե դպրոցական և  
թե արտադպրոցական: Բայց յերեխային դաս-  
տիարակող գործոնը միայն դպրոցը չե. յերե-  
խաները շարունակ գտնվում են այն միջավայրի  
ազգեցության տակ, ուր նրանք ապրում են:  
Յերեխն այդ միջավայրը բացասական ազգեցու-  
թյուն ե ունենում նրանց վրա, վա՛տ դաստիա-  
րակում, յերեխն ել, ընդհակառակը, լավ ազգե-  
ցություն ե ունենում, լա՛վ դաստիարակում:  
Դպրոցը պետք ե ճանաչի՝ այդ միջավայրը, նրան  
մո՛տ կանգնած լինի, շփվի նրա հետ, հաշվի առ-  
նի նրա ազգեցությունը և յեթե վերջինս վատ  
ե—պետք ե վերացնի, իսկ յեթե լավ ե—պետք  
ե մշակի:

Այդ քիչ ե. դպրոցը պետք ե ազդի՛ այդ մի-

ջավայրի վրա այն իմաստով, վոր նա նպաստող  
գործոն հանդիսանա յերեխայի ուղիղ և ուցիո-  
նալ դաստիարակության խնդրում, և վո՛չ թե  
խոչնդու դառնա դպրոցի դրական աշխատանք-  
ների նկատմամբ։ Դպրոցն այս ազդեցությունն  
իր Մջապատի վրա ձեռք ե բերում միայն այն  
դեպքում, յերբ ազգաբնակությունը շահագրգո-  
ված ե դպրոցի հետ միահամուռ աշխատելու,  
յերբ նա գիտե և հասկանում ե դպրոցի աշխա-  
տանքը, ուստի և մոտենում ե դպրոցին, ձայ-  
նակցում նրան—յեթե այդ պետք ե։ Իսկ ազ-  
գաբնակությունը դպրոցի աշխատանքի ուղղու-  
թյունը կմընի և բարյացակամ վերաբերմունք  
ցույց կտա դեպի այդ աշխատանքը միայն այն  
դեպքում, յեթե դպրոցը կրավարարի ազգաբնա-  
կության կարիքները, ընդառաջ կգնա նրա պա-  
հանջներին, ի հարկե, պետք ե խիստ ընտրու-  
թյուն կատարել այդտեղ. յեթե այդ պահանջ-  
ներն անմիտ են, յետաղեմ, յեթե զրանք խան-  
դարում են դպրոցի կուտուրական-հասարակա-  
կան աշխատանքի ուղիղ ընթացքը, կրթական-  
դաստիարակչական աշխատանքը—պետք ե կա-  
րողանալ վարվել այնպես, վոր նման պահանջ-  
ները վերանան և իրենց ընական մահով մեռ-  
նեն։ Ստորև մենք կբերենք որինակներ, ցույց  
համար, թե այդ ի՞նչպես կարելի յե ա-  
տալու համար, թե այդ ի՞նչպես կարող է ա-  
նել։ Մեր Խորհրդային պետության մեջ, ինչպես

շեշտեցինք, դպրոցն իր աշխատանքով պետք ե  
բավարարի ազգաբնակության պահանջները, այս  
հանգամանքն ուսուցչի համար առանձին կարևո-  
րություն ունեցող խնդիր ու նպատակ ե հան-  
դիսանում. այս խորհրդի իրագործումն ուսուցչին  
բարոյական մեծ բավականակություն կպատճառի,  
վորովհետև մեր պետությունը—բանվորագյու-  
ղացիական ե, աշխատավորության պետություն  
ե, ուրեմն և ինքը պետական իշխանությունն  
ու ամբողջ խորհրդային հասարակությունն ե  
պահանջ գնում, վոր դպրոցը բավարարի բան-  
վորների և գյուղացիների կարիքները։ Բուրժու-  
ական յերկրներում պետական իշխանությունը  
ձգտում ե դպրոցի միջոցով բավարարել բուրժու-  
ագիայի կարիքները, շահագործող դասակար-  
գերի պահանջները. այդ յերկրներում պետական  
իշխանությունն առաջարկում ե դպրոցական հա-  
մապատասխան ծրագիր, վոր ներշնչված ե լի-  
նում բուրժուական աշխարհայացքով, այնպիսի  
ծրագիր, վորի կիրարկումը ուսուցչին կամա և  
ակամա աջակից ե դարձնում աշխատավորու-  
թյունը ճնշելու գործին։ Յեթե ուսուցիչը հա-  
մակրում ե ճնշված դասակարգին, աշխատավոր  
դասակարգին, և յեթե նա ցանկանում ե ամե-  
նից առաջ նրանց պահանջներին ընդառաջ գնալ,  
դպրոցում ծառայել նրանց ոգակի համար,—բուր-  
ժուական յերկրներում նա այդ կարող ե անել

մի՛միայն հակառակ դպրոցական ծրագրների, հակառակ այն ուղղության, վոր գծում և պետական իշխանությունը: Ստացվում ե յերկվություն, ուսուցչի համար՝ վողբերգություն: Խորհրդային յերկրի ուսուցչի համար այդ յերկվությունը տեղի չունի, յեթե, ի հարկե, ուսուցիչը նպատակ չի դրել՝ աշխատել հոգուտ բուրժուազիայի: Բայց այժմ մեզ մոտ շատ դժվար ե գտնել այնպիսի ուսուցիչ, վորն իր համար ընտրեր բուրժուական ուղղություն: Այդպիսի ուսուցիչն այժմ մեզ մոտ իրենից կներկայացներ մի հազվագյուտ յերկույթ, վոր կարելի յեր դպրոցից վերցնել՝ պատմական մուզեյում պահ տալու համար: Մեր յերկրում պետական իշխանությունն իր ամբողջ տնտեսությունն, աշխատանքային ամբողջ գործունեյությունն, ամբողջ կյանքը կառուցում ե համաձայն աշխատավորական մասսաների, բանվորա-գյուղացիական ազգաբնակության պահանջների: Ուստի և ժողովրդական կուսակցության կոմիսարիատը դպրոցներին առաջարկեց դպրոցական այնպիսի ծրագիր, վորի ոգությամբ կարելի կլինի, բավարարելով աշխատավոր մասսաներին, դեպի վորը ձգտում ե մեր խորհրդային պետությունն ու կոմունիստական կուսակցությունը:

Պետ. Գլուխով. Խորհրդի ծրագրները միանգա-

մայն համապատասխան են հասարակական այն կառուցվածքին, վոր այժմ ստեղծվում ե մեզ մոտ. այդ ծրագրներով աշխատելը դպրոցին մասնակից կղարձնի այն ընդհանուր շարժմանը, վոր դիմում ե դեպի կոմմունիստական հասարակակարգ: Այժմ տեսնենք, թե Պ.Գ.Խ.-ի ծրագրներն ի՞նչ չափով են բավարարում գյուղական ազգաբնակության խնդիրները, գյուղացիության պահանջները:

Գյուղացիները դպրոցի մասին կարծիք հայտնելիս, ամենից առաջ հետևյալ պահանջներն են անում տարրական դպրոցից—«յերեխաներին կարդալ, գըել և հաշվել սովորեցրեք»:

Պետ. Գլուխով. Խորհրդի ծրագրները զանց են առնում, մոռանում են այդ պահանջը:

Վո՛չ, չեն մոռանում: Ընդհակառակը, նրանք այդ ուղղությամբ ավելի հեռու են գնում, քան հին դպրոցի ծրագրները, նրանք ավելի յեն մոտենում գյուղացիության իսկական պահանջներին: Այսպես, որինակ, «Մայրենի լեզվի գիտելիքների և ուսակությունների ծավալը» գլխում մենք հետևյալ մոմենտներն ենք գտնում:

Առաջին տարի. Ստացած տպագորությունները ազատ պատմել մասնական լեզվով... իմանալ կարդալ և գըել... Կոլեկտիվ գըել պըլատակներ: Դիտողությունների պարզ գրանցումներ...

Յերկրորդ տարի. Ընթերցումն գործնական բնույթ կրող փոքրիկ հոգվածների:

Յերրորդ տարի. Ընթերցումն փոքրիկ, իրենց բովանդակությամբ մատչելի՝ գիտական և ամենահիմական բնույթ կրող (մասնավորապես զյուղատնտեսությանը վերաբերող) գրքույկների, լրագրի գլխավորապես «աեղական կյանք»-ից ընտրած կտորների... Ազգականներին և ընկերներին նամակներ գրելը... յեղանակին հետեւելը և դիտողությունների գրանցումն, որացույց կազմելը:

Չորրորդ տարի. Շարունակել զարգացնել պարզ գիտական-հանրամատչելի գրականության և առհասարակ գիտակցական ինքնուրույն ընթերցումն... Լրագրների (Սևէ Միության, արտասահմանյան պետությունների կյանքը) ընթերցումը... Կազմել իսկական (քաղաքացիների և իր համար) հայտարարություններ, ստորագրություններ, հաշիվ, հեռագրներ, ստացականներ, ժողովների արձանագրություններ, աշխատանքի հաշվետվություններ, փոստային բլանկներ լցնել, լրագրների համար թղթակցություններ գրել...

Նայեցեք, վորքան ունակություններ են պարունակում սրանք՝ զյուղական կյանքի, զյուղական կենցաղի համար անհրաժեշտություններ:

Յեկ մեր մասսայական դպրոցի համար միթե քիչ կենի՝ յեթե այսքան ունակություններ հաղորդվին աշակերտներին։ Անկասկած, մեր

մասսայական ուսուցիչը կկարողանա այդ բոլոր տեղեկությունները հաղորդել, սովորեցնել գյուղի յերեխաններին...

Մատեմատիկայի ծրագրում ևս մենք գըտնում ենք մի շարք մոմենտներ, վորոնք դպրոցը շատ են մոտեցնում գյուղի առողյա պահանջներին, որինակ՝ «հողաչափական աշխատանքներ, պարզ հատակագիծ և մասշտաբ» (III տար.). «Նախահաշվներ և հաշվետվություններ (վոչ բարդ) կազմելը... հողամասի բաժանումն ըստ պլանի: Մուտքի և ծախքի նշանակումների հասարակ ձևեր» (IV տար.)\*)։

Յեթե դուք գյուղացիներին ծրագրի վերոհիշյալ տեղերից կարդաք, — նրանք դպրոցն ավելի կհամակրեն։ Անհրաժեշտ ե, իհարկե, վոր զըպրոցն այդ ունակություններն հաղորդի՝ վարժություններ կատարելով այնպիսի նյութերի վրա, վորոնք իրո՞ք պատահում են կյանքում, վորպեսզի ունակությունները (որինակ, ստացականներ գրելը) ձեռք բերվեն իսկապես վոր պետքական, կյանքի համար անհրաժեշտ և վոչ թե ֆիկտիվ ստացականներ կազմելու վրա։ Յեկ այսպիսի՝ առաջին հայացքից ըստ յերևույթին մանր

\*) Յեթե ուսուցիչն այդ չգիտե, ցանկության դեպքում կարող և սովորել, դիմելով թեկուզ այս գրքույկին՝ Տկաченко—«С'емка планов» (Вып. II), из серии „Педагог. курсы на дому“.

աշխատանքի մեջ կարելի յե իրականացնել աշակերտության միջոցով գյուղացիներին ծառայելու գործը, կարելի յե ուսուցումը կապել հասասարակականորեն ոգտակար գործի հետ:

Ինքնին հասկանալի յե, վոր թեկուզ մի հասարակ հայտարարություն գրելու համար անհրաժեշտ ե գիտենալ համապատասխան փաստեր, շրջապատի կյանքի հետ ծանոթ լինել, հասկանալ և այլն: Յեվ Պ. Դ. Խ. -ի ծրագրներն այդ խնդիրներն ուղիղ են դնում դպրոցի առաջ, նույնիսկ առաջնակարգ տեղ տալով նրանց: Զե՞ վոր պարզ ե, վոր կյանքում կարդալը, գրելն ու հաշվելը պետք են միայն կյանքի համար, մարդկանց փոխարաբերությունների համար: Ամենից առաջ՝ դպրոցը յերեխաներին պետք ե սովորեցնի հասկանալ ազգաբնակության աշխատանքային կյանքն, ըմբռնել շրջապատի մարդկանց աշխատանքային գործունեյությունը, ճանաչել նրա վատ և լավ կողմերն և ոգնել աշխատանքի և առհասարակ տնտեսության բարձրացմանը՝ գիտության միջոցով:

Յերեխաները հասկանում են, թե իրենց տանն ով ինչով ե զբաղված, ի՞նչ աշխատանք ե կատարում գյուղական ընտանիքը տարվա զանազան ժամանակներում, ինչ միջոցների (ինչպիսի տեխնիկայի) ոգնությամբ են կատարվում գյուղական զանազան աշխատանքներ, ինչպիսի

արդյունք են տալիս այդ աշխատանքները, ինչպես կարելի յե այդ նույն աշխատանքները կատարել ավելի հեշտ միջոցով և լավ, վորպեսզի շատ արդյունք ստացվի: Ծրագրների գյուղական վարիանտը գյուղատնտեսական աշխատանքներին և նրա հետ սերտ կապված խնդիրներին շատ տեղ ե տալիս, մամնավորապես գարնամայինամառային յեռամսյակում. ուսման IV տարվա ծրագրներում կա հատուկ թեմա՝ «Գյուղատնտեսության հաջողությունները»:

Գյուղատնտեսական աշխատանքի զանազան յերկությունները հասկանալով, համապատասխան աշխատանքներ կազմակերպելով, վորձերը ցուցադրելով, կենդանաբուծության, բանջարաբուծության, դաշտային աշխատանքի և այլն կազմակերպման բարվոքմանը նպաստելով՝ դպրոցն, ի հարկե, բավարարում ե գյուղացիներին պահանջները, և յեթե դուք գյուղացիներին պատմեք, վոր ահա դպրոցը, նոր ծրագրների համաձայն, գյուղատնտեսական այս կամ այն աշխատանքով պիտի զբաղվի, — դուք ձեռք կբերեք ազգաբնակության համակրանքը դեպի դպրոցը: Ի հարկե, անհրաժեշտ ե, վոր դպրոցն այդ մասին վոչ միայն խոսի, այլ և գործի, հասարակական անհրաժեշտ վորոշ աշխատանք կատարի: Յեվ դպրոցն այդ կարող ե կատարել: Մենք արդեն համապատասխան բավական որինակներ

ունենք դպրոցական պրակտիկայից։ Յերբեք անհրաժեշտ չե անպատճառ մեծ տնտեսություն ունենալ, մեծ հողամաս մշակել։ Բավական ե, դպրոցին կից, փորձերի համար ունենալ մի փոքրիկ հողամաս և գյուղական տնտեսություններն ոգտագործել՝ կիրարկելով թեկուղ այն մեթոդները, վորոնք մատնանշված են աշխարհագիտության ծրագրի բացատրականում։ Գյուղատնտեսական աշխատանքի ուսումնամիջությունը դրաբոցում ամենասերտ կերպով կապվում ե ուսուցչի՝ գյուղում կատարելիք կուլտուրական - հասարակական աշխատանքի հետ ընդհանրապես։ Այս խնդրում աշխատանքը դպրոցում և աշխատանքը չափահաս ազգաբնակության մեջ կարեցի յե միացընել և ամբողջ դպրոցը կուլտուրական ծառայության կանչել գյուղական ազգաբնակության նկատմամբ։ աշխատանքի այդ միացումը հնարավորություն կստեղծի թեթևացնելու ուսուցչի այն հատուկ աշխատանքը, վոր նա պիտի տանի չափահաս ազգաբնակության մեջ՝ գյուղատնտեսության հարցերում։

Գյուղական դպրոցը չի կարող սահմանափակել միայն գյուղատնտեսական աշխատանքի ուսումնամիջությամբ, ներկայումս գյուղատնտեսությունը առանձնացած, կղզիացած չե։ Գյուղերի ու քաղաքների միջև կապեր են հաստափած։ Այդ կապերի վատ և լավ լինելուց ե կախ-

ված գյուղացիության բարեկեցության աստիճանը։ Ճանաչել այդ կապերը, դրանցից լավ ոգտվել գիտենալ — սրանում կարիք են զգում գյուղացիներն ու գյուղի յերեխաները։ Յեկ Պ. Գ. Խ.-ի ծրագրները ընդգրկում են առևտության հարցեր, հաղորդակցության հարցեր, փոստային և հեռագրական կապի հարցեր։ Քաղաքը հետաքրքրում ե գյուղացւն, քաղաքային արդյունաբերությունից գյուղն ոգտվում ե, գյուղացին հետաքրքրվում ե բանվորի կյանքով, մանավանդ վոր բանվորությունն ե այժմ մեզ մոտ վճռող ֆակտորը — մեր ամբողջ տնտեսության և կուլտուրայի կարգավորողն ու տնորինողը, Դրա համար ել Պ. Գ. Խ.-ի ծրագրներում թելեր են ծգված գյուղից գեղիքաղաք։ Գյուղի յերեխաները ծանոթանում են և արհեստավորի և բանվորի կյանքի հետ, նրանց աշխատանքի ու կենցաղի հետ, քաղաքային արտադրության, առևտության, կուլտուրական հիմնարկների հետ, քաղաքի ազգաբնակության կենցաղի ու խորհրդային քաղաքային հիմնարկությունների հետ<sup>\*)</sup>։ Այսուհետև յերեխաները ծանոթանում են իրենց գավառի և իրենց նահանգի տնտեսության

<sup>\*)</sup> Ի հարկե, լավ կլիներ, վոր այդ կատարվեր քաղաք այցելելով և տեղում դրանց հետ ծանոթանալով. յեթե այդ հնարավոր չե, — պետք ե անել գրքերի և կամ քաղաք յեղած մարդկանց պատմվածքների ոգնությամբ։

հետ և վերջապես ձեռք են բերում կարևոր տեղեկություններ՝ Ա. Խ. Հ. Մ. և այլ յերկրների տնտեսության մասին։ Զե՞ վոր այժմ համաշխարհային շուկայի դրությունն անդրադառնում ե ամեն խուլ անկյունի վրա, և գյուղացիները պետք ե իմանան, որինակ, արդյո՞ք շահավետ ե մեզ համար այս կամ այն պայմանը կնքել Անդիխայի կամ Ֆրանսիայի հետ, պետք ե իմանան, թե ի՞նչ նշանակություն ունի, որինակ, այն հանգամանքը, վոր ամբողջ աշխարհից հավաքված վոսկու հսկայական պահեստներն իր մոտ ե կուտակել Ամերիկան։

Այս բոլորը գյուղացին պետք ե իմանա, այս բոլորն անմիջապես վերաբերում են նրան։

Հայտնի յե, վոր անտեսության վորոշ ձեռքի վրա յեն ստեղծվում սոցիալական վորոշ հարաբերությունները։ Ծրագրները մերկացնում են այդ հարաբերությունների դասակարգային եյտթյունն ու այնպիսի պարզ ձեռվ ներկայացնում, վոր մատչելի յե դառնում յերեխաներին։ Ռւսման առաջին տարում, Հոկտեմբերյան Հեղափոխության տարեդարձի տօնակատարության առթիվ, ծրագիրը կանգ ե առնում «աշխատավորության կյանքն այժմ և ցարի, կալվածատերերի ու կապիտալիստների ժամանակ» թեմայի վրա։

Ուսման II տարում ծրագիրը զբաղվում է գյուղի դասակարգային կազմով, III տարում —

քաղաքի և իր շրջանի դասակարգային կազմով։ Ուսման IV տարում դասակարգային տեսակետը շատ ուժեղ կերպով ե տարգած մի շարք կոմպլեքսներում։ Արդեն Լին թեմայի մեջ մենք գործ ունենք թշնամի դասակարգի հետ. — «գյուղացիները և կալվածատերերը», «բանվորները և կապիտալիստները»։

Դասակարգային վորոշ հարաբերությունների ֆոնի վրա առաջանում ե պայքար, ծավալվում են քաղաքական դեպքերը, առաջանում են պատերազմներ, հեղափոխություններ, բարենորոգություններ։ Պ. Գ. Խ. Ի. ծրագրները կանգ են առնում դրանց վրա այն չափով, ինչ չափով անհրաժեշտ ե և հնարավոր ե դրանք պարզել, մատչելի դարձնել յերեխաներին։ Ամենից շատ տեղ ե տրվում այժմեյականությանը։ Յերեխաները պետք ե ծանոթանան խորհրդային կարգերի, Ռ. Կ. Կ., Կոմյերիտամիության, Կոմինտերնի հետ, կռվի այն պատկերների հետ, վորոնք այժմ ձգվում են մեր առաջ։ Յեկ այս ծանոթությունը պետք ե տեղի ունենա վոչ թե գրքի միջոցով, այլ գլխավորապես կոնկրետ յերեսույթներում։ Այսպես, որինակ, խորհրդային կարգերի հետ ծանոթանալը տեղի յե ունենում հետզհետե. — ուսման II տարում յերեխաները նախ ծանոթանում են գյուղի կուլտուրական և այլ հիմնարկությունների — խրճիթ - ընթերցարանի, լիկունկարի,

գյուղխորհրդի հետ, այնուհետև ծանոթանում են գավառակային խորհրդի հետ և հետո, ուստան III տարում, մանրամասն անցնում են՝ խորհրդային կարգերը գյուղում, քաղաքում, գավառում, նահանգում։ Ուստան IV տարում յերեխաները սովորում են Ռ. Ս. Խ. Հ. \*) և Ս. Խ. Հ. Մ. սահմանադրությունը. այստեղ, համապատասխան տեղերում, հիշատակվում են հակադիր պատկերներ այն մասին, թե առաջ ինչպես ելին յերկրը կառավարում կարվածատերերն ու կապիտալիստները, ի՞նչպես ելին կատարվում ցենզային (արտոնություն ունեցողների) ընտրությունները և այլն։

Խորհրդային ամբողջ կարգերի և զանազան հիմնարկների աշխատանքների հետ ծանոթանալու արդյունքն այն պետք է լինի, վոր յերեխաները, դպրոցն ավարտելով, իմանան, թե կարիքի գեպքում վոր հարցի վերաբերյալ ում պետք է դիմեն։ Գյուղացիները տեղերում շատ հաճախ են տուժում, իրավագրկության ու կամայականության յենթակա լինում լոկ այն պատճառով, վոր այդ շգիտեն, և այժմ, յերբ դպրոցը նրանց կողնի այդ խնդրում, տալով նրանց այնպիսի դպրոցավարտ յերեխաներ, վորոնք կարող կլինեն այդ


\*) Հայաստանի դպրոցներում՝ Հ. Ս. Խ. Հ. սահմանադրությունը։

բոլոր հարցերից հասկանալ, — գյուղացիներն, ի հարկե, գոն կմնան դպրոցից։

Մեր յերկրում բանվարների ու գյուղացիների կյանքում հետզհետե ավելի ու ավելի մեծ դեր ե սկսում խաղալ կոռպերացիան, Հայտնի յե, թե ինչ նշանակություն և տալիս կենինը կոռպերացիային՝ սոցիալիստական շինարարության գործում։ Առանց կոռպերացիայի չի կարելի գյուղական անտեսությունը ցանկալի բարձրության հասցնել։ Գյուղացիության հոծ մասսաները, առանց կոռպերացիայի, գյուղական զորքաների ճանկերն են ընկնում։ Առանց կոռպերացիայի՝ հնարավոր չե նորմալ կապեր հաստատել գյուղի և քաղաքի միջև։

Նոր ծրագրները կոռպերացիայի յերևույթների վրա կանգ են առնում արդեն ուսման II և III տարում, իսկ IV տարում զրան ավելի զգալի տեղ է տրվում։ Այսպես, «գյուղատնտեսության հաջողությունները» թեմայում մենք կարգում ենք — «կոռպերացիան, նրա տեսակները և նրա նշանակությունը աշխատավորության համար։ Ի՞նչպես պետք է չունենար և միջակ գյուղացիներն իրենց վիճակը բարելավեն կոռպերացիայի միջոցով։ Կոլեկտիվ տնտեսություններ (գյուղատնտեսական կոմունաներ, արտելներ)։ Փոխոգնության կոմիտեներ»։

Դպրոցի միջոցով շատ բան կարելի յե անել



կոռպերացիայի պլուագանողի խնդրում։ Ահա  
իմ առաջն ե գրված Բուլավկինի դպրոցի (Ո. Ս.  
Խ. Հ. Լուսժողկոմատի Գագինյան փորձնական  
կայան, Ռյազանի նահանգ, Ռանենբուրգի գա-  
վառ) աշակերտի հիշատակարանը. 1924 թվի  
մայիսի 30-ին աշակերտը գրում ե (մեջ եմ բե-  
րում, վոճը թողնելով անփոփոխ). «Յերեկ մենք  
բոլոր աշակերտներս ուսուցիչների հետ միասին  
գնացինք ծանոթանալու Գագինի գյուղատնտե-  
սական վարկային ընկերության հետ. և ահա  
մենք գնացինք կոռպերացիա. ուսուցիչը մեզ  
պատմեց, թե առաջին անգամ ինչպես և վոր-  
տեղ առաջ յեկավ կոռպերացիան։ Առաջին ան-  
գամ կոռպերացիան կազմվեց արևմտյան յերկըր-  
ներում — Ֆրանսիայում, Ամերիկայում, Անգլիա-  
յում, Գերմանիայում և այլն։ Բայց ներկայումս  
կոռպերացիան արագ արագ զարգանում ե բոլոր  
յերկներում։ Այժմ սկսել ե զարգանալ նույնիսկ  
մեզանում։ Ահա, որինակ, մեզ մոտ կազմվել ե  
նախկին Գագինի գավառակում։ Յերբ մենք յե-  
կանք կոռպերատիվ, մենք սկսեցինք ավելի ուշա-  
գրությամբ նայել։ Դուքս յեկավ, վոր այդ կոռ-  
պերատիվը հարկավոր ե վոչ թե վորեւ պոպին  
(տերտերին), այլ գյուղացուն, որինակ՝ գերան-  
դի, փողոց, մեխ, կողպեք, յերկաթ, նավթ, աղ,  
չիթ, տաշտ և այլն։ Հետո մենք սկսեցինք կա-  
ռավարչին հարցնել, թե վոր բանը ինչ արժե, և

ահա մենք սկսեցինք համեմատել — շուկայում ե  
թանգ, թե՞ կոռպերատիվում։ Յեկ դուրս յեկավ,  
վոր այստեղ ամենից աժան ե։ Յերբ մենք ամեն  
բան հարցը ինք և իմացանք, մենք գնացինք Գա-  
գինի ընկերության վարչությունը։ Յերբ մենք  
եկանք, սկսեցինք հարցնել — ամենից առաջ, թե  
ի՞նչպես են նրանք առուատուր անում։ Յեկ ահա  
նրանք ամեն ինչ մեզ պատմեցին։ Ահա՝, որինակ,  
նրանք ամեն ինչ գրում են. և նրանցից վոչ վոք  
վոչ մի բան չի կարող վերցնել տանել, վորովհե-  
տե ամեն ինչ գրվում ե և հետո հանձնվում մի  
կառավարչի։ Յեկ ահա մեզ պատմեցին, թե ինչ-  
պես ե կազմվել ընկերությունը. — առաջ կաղ-  
մակերպվել են 39 մարդ. և նրանք ունեցել են  
ընդամենը 66 ր. 30 կոպ.։ Բայց յերկու ամ-  
սվա ընթացքում նրանց մաքուր զրամագլուխը  
դարձել է 10523 րուբ.։ Յեկ այժմ նրանց ան-  
դամների թիվը ե 120 մարդ։ Յեկ այդ զրամա-  
գլուխը 10523 րուբի յե գարձել այն պատճա-  
ռով, վորովհետե կառավարությունը նրանց ապա-  
ռիկ բաց ե թողել ամեն տեսակի ապրանք, և  
յերբ կծախեն, այն ժամանակ կվճարեն պարտքը։  
Բացի զրանից, կառավարությունը գյուղատնտե-  
սությունը բարձրացնելու համար կոռպերատիվին  
փող ե բաց թողնում — ձիեր, կովեր գնելու հա-  
մար և այլն։ Միայն մայիս ամսին, գյուղատնտե-  
սությունը բարձրացնելու համար, բաց ե թող-

նված յերկու հազար ըուբլի։ Յերբ մեզ կոռպերացիայի մասին մանրամասն բացատրեցին, այն ժամանակ մենք համաձայնեցինք անդամագրվել ընկերությանը։ Յեզ մենք ավելինք գրավոր հայտարարություն, վոր մեզ ընդունեն ընկերության անդամ։ Յեզ վորպեսզի ընկերության անդամ գրվեն, պետք ե վճարեն փայ — 1 ըուբլի 70 կոպեկ։ Յեզ ահա մեզ ընդունեցին ընկերության անդամ և մենք վճարեցինք 1 լուր. 70 կոպ., և ահա մենք համարվում ենք ընկերության անդամ։

Մենք ներողություն ենք խնդրում այս յերկար մեջբերումի համար, բայց դա ինքն ե վկայում իր մասին, դա պարզ ցույց ե տալիս, թե գյուղական դպրոցում պետք ե այսպիսի աշխատանք կատարել թե վոչ։ Ի հարկե, այս աշխատանքը շատ պակասություններ ունի. բայց չե՞ վոր այս աշխատանքը յերեխայի գործ ե և մեր առաջ պատկերացնում ե միայն մի փոքրիկ մասնիկը, միայն մի փոքրիկ եպիզոդն այն ամբողջ աշխատանքից, վորի ոգնությամբ յերեխաները դպրոցում ձեռք են բերել կոռպերացիայի վերադրյալ գիտելիքներ և ունակություններ։

Այսուհետեւ, դպրոցը կարող ե և պետք ե մեծ գեր խաղա գյուղում նոր կենցաղ ստեղծելու գործում։ Պ. Գ. Խ.-ի ծրագրներն այս ուղղությամբ ևս վորոշ ցուցմունքներ են տալիս, —

նրանք մի շարք հարցեր, թեմաներ, ինդիբներ են գնում, վորոնք կարելի յե և պետք ե լուծել՝ դպրոցի միջոցով տեղական կենցաղը բարվոքելով։ Նախ, Պ. Գ. Խ.-ի ծրագրները դպրոցի առաջ գնում են առողջապահական-սանիտարական խնդիրներ։ Ուսման I և II տար. ծրագրները մշակելու համար առաջարկում են հատուկ թեմա՝ «առողջապահություն»։

Հիշում ենք, թե Ռ. Ս. Խ. Հ. Լուսժողկոմատի առաջին փորձնական կայանն ինչպես անցկացրեց առողջապահության կամպանիան։ (Տես «На путях к новой школе», 1923 թ. № 6)։ Վերջերս Ս. Տ. Շատրվանի այդ կամպանիայից մի եպիզոդ տվեց. — ընտրել եյին յերեք գյուղ. այդ գյուղերից մեկում բնակիչները կեղտոտ աղբյուրից եյին ջուր վերցնում, մյուսում — ջրհորի ջուր գործածում, իսկ յերրորդում — մաքուր աղբյուրի ջուր եյին խմում։ Հետո քննեցին, թե այդ գյուղերից յուրաքանչյուրում յերեխաների ու մեծերի մահացությունն ինչ աստիճանի յե։ Տարբերությունն ակնբախ եր։ Դպրոցն իր քննության արդյունքները ցուցադրեց գյուղացիությանը։ Սանիտարական տեսակետից ամենավատ գյուղի բնակիչները խոստովանվեցին, վոր իրենք ամաչում են։ Հետևանքն այն յեղավ, վոր նրանք գործնական միջոցներ ձեռք առան՝ իրենց գյուղի խմելու ջուրը լավացնելու։ Բայց այս միայն մի

փոքրիկ մասնակի որինակ ե՞ւ առողջապահության կամպանիայից։ Այդ կամպանիայի ժամանակ դպրոցներն ազգել են յուրաքանչյուր ընտանիքի առողջապահական և սանիտարական ռեժիմի վրա, խորացրել յերեխաների առողջապահական ունակություններն ու սովորեցրել լուրջ հոգալ իր և իր շրջապատի առողջապահության պաշտպանության մասին, ազգել են գյուղի սանիտարական ռեժիմի վրա ընդհանրապես։

Մենք արդեն շատ որինակներ ունենք լուսակուլարական աշխատանքի, վոր գյուղական դպրոցը տանում ե պատանեկության և չափահաս ազգաբնակության շրջանում։ Շատ հաճախ դպրոցը նախաձեռնում ե գյուղում խրճիթ ընթերցարան հիմնելու. վերջինիս սպասավորում են վոչ միայն ուսուցիչներն, այլ և աշակերտները, գրանց կազմակերպությունը, Աշակերտները զարդարում են խրճիթ - ընթերցարանը, կարգավորում են գրադարանը, յերբեմն այդտեղ կարգում են լսողների համար և այլն... Պ. Գ. Խ.-ի ծրագրները հասարակական - կուլտուրական աշխատանքի համար շատ այսպիսի մոմենտներ են թերզրում, վորոնք անպայման մեծ ազգեցություն ունեն գյուղի պատկերը դեպի լավը փոխելու, նրա կենցաղը բարգրագելու տեսակետից։ Ծրագրներն ուսուցչի ուշադրությունը կենտրոնացնում են մասնավորապես հեղափոխական

տոների վրա, առաջարկելով հատկապես զբաղվել այդ որերի նշանակության լուսաբանությամբ և դրանց տոնակատարությամբ։ Գյուղում մեծ մասամբ դպրոցն ե այն կենտրոնը, վորի շուրջը և կարող ելին խմբվել՝ այդ տոները անցկացնելու համար։ Այդ գյուղերում, յեթե նույնիսկ ընդունենք, վոր կան ուրիշ հիմնարկներ, վորոնք ավելի՝ մեծ յեռանդով նախաձեռնություն կցուցադրելին այս խնդրում,—բայց և այնպես զպրոցն այդ տոներին շատ բան կարող ե տալ—թարմություն, աշխատություն, հետաքրքրություն և հուզական շատ մոմենտներ, գեղարվեստ—նկարներ, պլակատներ, յերգ, յերաժշաություն, արտասանություն, գրամատիզացիա և այլն։ Տողերիս հեղինակը հաճախ ե առիթ ունեցել տեսնելու, թե գյուղացիները վո՞րքան ուրախ և գոնեն լինում այսպիսի մոմենտներից, վոր յերեխաները ստեղծում են նըանց միապաղադանձրալի կյանքում։

Պ. Գ. Խ.-ի ծրագրները հատուկ տեղ են տալիս նաև մանուկների ու կանանց հարցերին, վորոնք շատ սերտ կապ ունեն գյուղում նոր կենցաղ ստեղծելու հետ։ Այսպես ե, որինակ, ուսման IV տարվա թեման՝ «բանվորուհու որը»։ Այդ թեմայի վրա աշխատելով, դպրոցը կարող է գյուղական կենցաղի շատ հիվանդ կողմերը կազդուրել և մանավանդ կանանց համակրանքը շահել։

Այսպես և գլուզի տշխատանքի բռվանդակությունն ու քարակտերը՝ ըստ նոր ծրագրների։ Այստեղ մենք չենք շոշափում գլուզական դասավանդման մեթոդների հարցը։ Մեր նպատակն եր այս հոդվածում միայն պարզել, թե Պ. Գ. Խ-ի ծրագրներն ինչ չափով են բավարարում գյուղացիության պահանջները։ Յեվ մենք տեսանք, վոր նոր ծրագրներով աշխատող գլուզն ընդուած ե գնում գյուղացիների կարիքներին։ Ըստ հանուր առմամբ գլուզը խորհրդային իշխանության և բանվորագյուղացիության ամբողջ հասարակայնության համար անտեսության շինարարության ու նոր, առողջ և ուրախ կենցաղ ստեղծելու գործում, կուլտուրական շինարարության գործում նաև ոգնական և հանդիսանում։ Հայտնի ե, թե ինչ խնդիրներ և հարցեր են այժմ գրված գյուղի առաջ։ Կոմունիստական կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն այժմ առաջին տեղն են տվել գյուղում տարվող կուլտուրական աշխատանքին, և բոլոր նախաձեռնությունների շարքում առաջին տեղը տրված է գյուղացիության բարեկեցությունը բարձրացնելու միջոցներին։ Դպրոցը պետք է միշտ հաշվի առնի գյուղի հիվանդ և հերթական խնդիրները, խիստ ուշադիր լինի, թե գյուղն ինչո՞վ ե ապրում, ի՞նչն ե նրան հուզում, ինչ հարցեր ե նա գնում և ինչ հարցեր պետք ե դնի յուրաքան-

չյուր առանձին մոմենտին, վորպեսզի, համնելով կուլտուրական նվաճումների հետեւալ աստիճանին, նորեն հարցեր առաջադրի։ Նոր ծրագրներն ուղակի այդ ճանապարհով են առնում։ Կարմիր թերու գրանց մեջ անցնում ե այժմեյությունը, ծրագրները տեղագիտության բնույթ ունեն և ուշի ուշով հետեւում են իրական կյանքի կենդանի պույլսի գարկին։

Յես հասարակ թյուրիմացություն եմ համարում այն գեպքերը, յերբ գյուղացիությունն իբր թե անբավականություն ե հայտնում, յեթե դըպրոցը նոր ծրագրներով ե աշխատում։ Յեթե դուք գյուղացիներին պարզ, հասարակ և լավ բացարեք, թե ի՞նչ են առաջարկում նոր ծրագրները, — գյուղացիները վոչի՞նչ չեն ունենա առարկելու։ Ծրագրները կանգ են առնում հատկապես այն ամենի վրա, ինչ վոր ամենից շատ ե անհրաժեշտ գյուղացիությանը։ Իսկ յերբ գյուղացիները գործի մեջ իրականացած կտեսնեն այդ ծրագրները, յերբ նրանք կտեսնեն ու կզգան գլուզական աշխատանքին համապատասխանող կենդանի արդյունքները, նրանք, իհարկե, ավելի՝ կմոտենան գլուզին, կապրեն նրա շահերով, կհողան նրա կարիքները։ Անշուշտ, գյուղացիներն, ամենից առաջ, կասեն՝ «Մեր յերեխաներին սովորեցրեք գրել, կարգալ և հաշվել»։ Յեվ այդ—ուղիղ կլինի։

Պ. Գ. Խ.-ի ծրագրներն այդ պահանջը չեն մոռանում: Բայց զյուղացիներն իրենց վերոհիշյալ խոսքերին կավելացնեն՝ «Գնալը՝ գնում ե իմ տղան դպրոց, համա չի կարում նալոգի թուղթն ինձ կարդալ, չի՛ կարում նրա միջի թվերը հաշվել»: Անա՛ թե ինչպիսի ընթերցումն և ինչպիսի հաշիվ ե պետք գյուղացուն, Յեվ այդ նրան կտա այն դպրոցը, վորը նոր ծրագրների ցույց տված ճանապարհով կդնա: Այդ մասին մենք արդեն բավական յերկար խոսեցինք այս հոդվածի սկզբում:

Իսկ յեթե գյուղացիներն, որինակ, եքսկուրսիայի դեմ են առարկում, — այդ առարկությունը յերբեք դպրոցի աշխատանքի բովանդակության դեմ չե ուղղված, այլ նրա մեթոդների դեմ: Յեվ առարկությունն, իհարկե, հիմնված ե միայն անհասկացողության վրա: Յեթե դուք յերեխաների հետ միասին մի շարք եքսկուրսիաներ կազմակերպեք դեպի դաշտ, դիմ խոտերի մի կոլեկցիա հավաքեք և սովորեցնեք, թե ի՞նչպես են դրանք տարածվում ու հետո այդ բացատրեք գյուղացիներին, — հավատացեք, վոր նրանք կհասկանան նման աշխատանքի, նման եքսկուրսիայի ոգուար: Իսկ յերբ դուք զբոսանքի գնաք առանց վորոշ նպատակի, յերբ ձեր «աշխատանքը» ձեր բացատրությունից հետո ևս անհասկանալի կլինի գյուղացիներին, — պարզ ե, իհարկե, վոր նրանք անբավական կմնան:

Տողերիս հեղինակին հայտնի յեն գյուղական դպրոցի՝ նոր մեթոդներով տարվող աշխատանքի շատ որինակներ, վորոնց դեմ գյուղացիները չեցին առարկում, վորովհետև գիտելին, թե ինչու և ինչի համար ե այդպիս կատարվում, և դպրոցական հաշվետու ժողովներում, դպրոցական ցուցահանդեսներում տեսնում ենին նման աշխատանքի ոգտակար արդյունքները:

Մենք այստեղ կանգ չենք առնի նաև այն հարցի վրա, թե Պ. Գ. Խ.-ի ծրագրներն ինչ չափով են բավարարում յերեխաների պահանջներն ու շահերը և թե նրանք վորքան են համապատասխանում մանկական ուժերին<sup>\*)</sup>): Միայն անհրաժեշտ ենք համարում մատնանշել, վոր ուսուցիչը ձեռքից բաց չպիտի թողնի մոմենտը, և ծրագիրը մշակելիս, աշխատանքի պլանը կազմելիս, գործին պետք ե մոտենա այս տեսակետից<sup>\*\*)</sup>):

Ի հարկե, նոր ծրագրների կիրարկման ճանա-

\*) Այդ մասին մենք խոսել ենք մի ուրիշ տեղ: Տես մեր հոդվածը՝ „Օ новых программах“, — „Народный учитель“, 1924, № 7, ինչպես նաև Լին գլուխը՝ «Կոմплекснаյин դասավանդման մասին» հոդվածի («Նոր դպրոցի ճանապարհին», մանկավարժական ժողովածու № 1, հրատարակություն Ռ.Ս.Խ.Հ., Լուսադոկոմատին կից Հայկական կենտրոնական հյուրոյի, Մոսկվա, 1925 թ.):

\*\*) Մենք ընդունում ենք, վոր այդ կարելի յե սովորել Բլոնսկու գրքույկներից — „Первый триместр в новой школе“,և „Второй триместр в новой школе“. Բլոնսկու առաջին գրքույկը հայերեն թարգմանված ե, — «Առաջին յետամսյակն աշխատանքային դպրոցում», հրատարակություն կենտրոնականի Լուսրածնի, Լենինական, 1924 թ.:

պարհին շատ արգելքներ պետք եւ հաղթահարել։ Այդ մասին շատ եւ խոսվել և խոսվում եւ։ Ամեն վոք այդ գիտե և կարող եւ առանց դժվարության թվել։ Այդ արգելքները, միասին վերցրած, շատ են դժվարացնում ծրագրների իրագործումը կյանքում։ Բայց և այնպես այդ չի նշանակում, վոր չպետք եւ մոտենալ Պ. Գ. Խ.-ի ծրագրներին։ Այդ դժվարությունների մեծ մասը դպրոցի առաջ ծառացած եւ վոչ թե նոր ծրագրների պատճառով, այլ ընդհանրապես։ Նման դժվարություններն առհասարակ խանգարում են դպրոցի նորմալ աշխատանքն և կսանդարեյին նաև այն դեպքում, յեթե դպրոցն ուրիշ ծրագրներով աշխատեր։ (Այդպիսի դժվարություններին են պատկանում, որինակ, սննդեսական բնույթ կրող դժվարություններն, ինչպես նաև ուսուցչի անպատճառությունը)։ Սակայն այդ բոլոր դժվարությունները հետզինեւե միահամուռ ջանքերով ավելի ու ավելի կհաղթահարվեն։ Յեթե պարզվի, վոր դրանք շատ են մեծ, պրակտիկան ցույց կտա, թե ինչպիսի սրբագրություններ պետք են անել ծրագրների մեջ, և Պետական Դիտական Խորհուրդն, անշուշտ, կանի այդ։ Սակայն այդ ուղղումները կարող են վերաբերել միայն առանձին մասերին, կարող են վերաբերել գիտելիքների և ուսակությունների այն ծավալին, վոր պետք եւ տա դպրոցը. բայց դիպչել ակզրունքնե-

րին, վորոնց վրա կառուցված են այդ ծրագրները, —Պ. Գ. Խ.-ը, իհարկե, չի կարող, մանավանդ վոր նրանց դեմ շատ թե քիչ լուրջ առարկություններ չի բերված և չի բերվում։

Հաշվի առնելով գործի դժվարությունն ու նորությունը, Ժողովրդական Խուսավորության Կոմիսարիատը նոր ծրագրները մասսայական դպրոցներում անցկացնելու խնդրին բավական զգուշությամբ մոտեցավ։ Նախ քան ծրագրների պարտադիր դարձնելն ուսման առաջին և յերկրորդ տարիների համար, ուսուցիչների վերապատրաստության յերկու ամառային կամպանիա անցկացրինք և ուսուցչության զգալի տոկոսն անցավ կուրսերով։ 1923 թվի կամպանիայի ժամանակ արդեն հայտնի եյին Պ. Գ. Խ.-ի ծրագրների նախագծերը, իսկ 1924 թ. կամպանիայի ժամանակ ծանոթ եյին ուսման բոլոր (չորս) տարիների ծրագրները։ Այդ կամպանիաները ծավալվեցին այնչափ, վորչափ յերբեք չի տեսել հինգ մուսասատանի մանկավարժությունը։ Սակայն վերապատրաստությունը չի սահմանափակվում միայն ամառային կուրսերով, նա դառնում է մանկավարժական ամբողջ պրոցեսի մշտական որգանական մասը, այնպիսի ձևեր ու մեթոդներ են դունում, վոր շարունակվում եւ մանկավարժական աշխատանքի պրոցեսում։ —Խորհրդային, պրոֆիութենական և կուսակցական հրատարակ-

Հությունները ուսուցիչներին և ժողովրդական լուսավորության հիմնարկներին մեծ արտոնություններ են տալիս գրականություն ձեռք բերելու խնդրում (գների մեծ զեղջ են անում, բայց են թողնում ապառիկ, վճարման համար յերկար ժամանակ են տալիս): Կենտրոնում Սոցդաստգիսվարը անդադար հիմնում ե կուրսեր, ուսուցիչներն անցնում են փորձնական-ցուցադրական դպրոցներով, հեռավոր անկյուններից կարճ ժամանակով Մոսկվա եքսկուրսիայի կանչված ուսուցիչներն այստեղ ծանոթանում են պրակտիկայի հետ. տեղերում ծավալվում ե ուսուցական դպրոցների ցանցն, ուր կենտրոնացվում են մանկավարժական ավելի ակտիվ ուժեր, վորոնք այդ դպրոցները դարձնում են հենակետեր՝ նոր ծրագրները կյանքում կիրարկելու գործում: Վերջապես, 1924 թ. սեպտեմբերին, Լուսժողկոմատը հրատարակեց մի շրջաբերական, վորով 1924—25 ուս. թ. վորոշ կատեգորիայի (անբարեհաջող ոլայմանների մեջ գտնված) դպրոցների համար սահմանվում են առանձին կարգեր՝ նոր ծրագրների լրիվ կիրարկմանն անցնելու համար: Այդ շրջաբերականում կարդում ենք հետևյալը.—«Դասավանդման կոմպլեքսային սիստեմին՝ ըստ նոր ծրագրների՝ անցնելը, 1924—25 ուսումնական տարվանից Սոցդաստգիսվարը անդադան պարտադիր է համարում»

1. Բոլոր քաղաքային և աստիճանի դպրոցներում,

2. Բոլոր ուսուցական և աստիճանի դպրոցներում,

3. Գյուղական և աստիճանի այն դպրոցներում, ուր աշխատակիցներից գոնե մեկն անցել ե 1924 թ. ամառային վերապատրաստության կուրսերը և կամ, անկախ դրանից, բավական պատրաստված ե՝ Պ. Գ. Խ.-ի ծրագրների եյությունն ուղիղ հասկանալու և ընդունակ է դրանք կիրարկելու:

Մնացած դպրոցների համար, նոր ծրագրը ներին անցնելու ընդհանուր պահանջները 1924—1925 թ. ստիպված ե մեղմացնել...

Մակայն, այս վերջին դեպքերում, անհրաժեշտ է ձգտել համնել հետևյալին.

1. Յեթի դպրոցական աշխատավորները դասավանդումը առանում են իրենց համար սովորական սիստեմով, վոր ներկա որյեկտիվ պայմաններում հնարավոր ե, — այդ գեղքում պետք ե ջանաւ վորպեսզի աշխատանքի բովանդակությունը, մամնավորապես հասարակագիտությանը վերաբերող նյութերը, համապատասխանեն Պ. Գ. Խ.-ի ծրագրներին:

2. Դպրոցի պրակտիկայում պետք է մոցնել մշակումն առանձին կոմպլեքմերի, Պ. Գ. Խ.-ի ծրագրների թեմաներից վերցրած:

3. Երջանային դպրոցների և հրահանգչական ապարատի ղեկավարությունն այդպիսի դպրոցների նկատմամբ պետք ե ուժեղացրած լինի:

4. Ժողովրդական լուսավորության որդանուերը պետք ե սահմանեն միջոցների մի սիստեմայու դպրոցների աշխատանքի համար ավելի բարեհաջող ոբյեկտիվ պայմաններ ստեղծելու...  
(«Եженաևընկ ՀԿՊ», № 20, սեպտեմբերի 30, 1924 թ.).

Հեղափոխության յոթերորդ տարում դըպրոցը ղեկավարել մինչ-ջրհեղեղյան ծրագրներով, —այդ կլիներ կոնսերվատիվիզմի մի մեծ արտահայտություն, վոր վոչնչով չեր կարելի արդարացնել: Ինքը կյանքն ե պահանջել այդ ծրագրները: Խորհրդային դպրոցը պետք ե լինի խորհրդային, բանվորա-գյուղացիական, պետք ե ներդաշնակի մեր յերկը նոր կյանքի կառուցվածքին, նա պետք ե իրենից ներկայացնի խորհրդային մարմնի որդանական մասը, և պատկոմների հետ, կոմյերիտմիության հետ, Ռ. Կ. հետ, խորհրդային իշխանության հետ միասին դիմի ղեալի կոմունիզմի ճանապարհը: Այն ուսուցիչը, վորն արդեն ընթանում ե կոմունիստական կուսակցության հետ, խորհրդային իշխանության հետ, —նա առաջ կտանի նաև դպրոցը:



## ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԲԵՐ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- 1) «Լին աստիճանի աշխատանքի դպրոցի ծրագիրը». Յերևան, 24 թ., գինը 50 կ.
- 2) Ինչպես կազմել հերթարիում». Մուշեղյանի: Յերևան, 22 թ., գինը 10 կ.
- 3) «Բույսի կյանքը պարզ փորձերով և 12 նկարներով», Նիկոնովի, թարգմ. Ա. Տ. Պ., գինը 40 կ.
- 4) Սոցիալիստական հեղափոխությունը և լուսավորության խնդիրները, Լենինի, Յերևան, 25 թ.
- 5) «Վորն ե աշխատանքի դպրոցը», Բ. Ը. Լոնսկի, գինը 25 կ.
- 6) «Աշխատանքի դպրոցի մանկապարտեզը», Բ. Ը. Լոնսկի, գինը 25 կ.
- 7) «Աշխատանքի դպրոց և աստիճանի», Բ. Ը. Լոնսկի, գինը 75 կ.
- 8) «Լին յեռամսյակն և աստիճանի նոր դպրոցում», Բ. Ը. Լոնսկի, գինը 40 կ.
- 9) «Ուսուցչության կոլեկտիվ աշխատանքը», Կրուպսկայա, գինը 20 կ.
- 10) «Պատկոմները և դպրոցը», Կ. Ռուպենի, գինը 25 կ.
- 11) «Գործնական մանկավարժություն», գինը 1 բուր.
- 12) «Մանկապարտեզը գյուղում», Կ. Ռուպենի, գինը 12 կ.
- 13) «Նոր դպրոցի ճանապարհներ», մանկավարժական հոդվածների ժողովածու, № 1, էջ 486, գինը 1 բուր. 50 կ.
- 14) «Լենինի պատգամները յերիտասարդության», Ա. Խ. Հ. Ս. Վ. Վարդարյանի կտանի նաև դպրոցը. կենարոն, հրատ., 1925 թ. Մ.

Հայաստան, Հ. Ս. Խ. Հ. Պատհավատի

Հայաստանի Հանրապետություն (1921 թ.) Լենինականի  
լուսադրամի

Հայաստան, Բ. Ս. Խ. Հ.  
կուսակցության առաջնորդություն

կից Հայաստան, Բ. Ս. Խ. Հ.



ՀՀ Ազգային գրադարան

## ԳԻՒՐ 12 Կ.

Ս.Խ.Հ.Մ. ԺՈՂՈՎՐԴՅԱՆԵՐԻ ԿԵՆՏ. ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

### ԼԵՆԻՆՑԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս և տեսել՝ 1) Լենինի պատգամները յերիտասարդության.

Տպագրվում են՝ 2) Լենին.—Խոչչպես պետք և լինի կոմյերիտը.

### ՍՍՀ-ՔԱՆ-ՔԱԿԱՆ ՇԱՐՔ

Լույս և տեսել՝ 1) Ստալին.—Գյուղացիական հարց.

Տպագրվում են՝ 2) Ստալին.—Ազգային հարցը.

### ԳՅՈՒՊԱՑԻԸՆԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս են տեսել՝ 1) Լենինսկի,—Գյուղատնտեսական հարկ.

» 2) Աստծու կամքը կամ գիտությունը.

Տպագրվում են՝ 3) Ռուգեն,—Գյուղաց. հողաշինարարության այբուբենը.

» 4) Մարդկային բնակարանի պատմությունը.

5) Վլասով.—Հողն ինչպես մշակել յերաշտի ժամանակ.

6) Դմիտրին,—Խավար և սնոտիապաշտություն.

### ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԳՐԱՇԱՐՔ

Լույս և տեսել՝ 1) Եսիպով.—Գյուղացիության պահանջները և խորհրդ. գպրոցի ծրագիրը.

Տպագրվում են՝ 2) Լենինի պատգամները լուսավորության խնդրում.

3) Ազգային հարցը և գպրոցը.

4) Նեվերով.—Ինչպես ելին ապրում տիկնիկները (մանկական).